DOI: 10.61760/18290108-agn.25.3-86

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ*

Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահիրատարակչական կենտրոնի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ, Վ. Գ. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի Գիտության և կրթության որակի ապահովման խմբի ավագ գիտնական-վերլուծաբան

Ներածություն

Բանակի մարտունակության ապահովումը մեծապես պայմանավորված է այն բանով, թե ինչպես է պետությունը կազմակերպում իր ապագա զինծառայողների դաստիարակությունն ու կրթությունը, մասնավորապես՝ ինչպիսի արդյունավետությամբ է գործում նախնական զինվորական պատրաստության համակարգը: Զինվորական ծառայությանը արագ հարմարումն ապահովելու նպատակով խիստ կարևոր է վերանայել նախազորակոչային տարիքի պատանիների հետ աշխատանքի բովանդակությունը՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկություններով պայմանավորված հոգեբանական բնութագրերը: Զինվորական ծառայությանը նախապատրաստելու համար անհրաժեշտ է դպրոցներում նախազորակոչիկների նկատմամբ կիրառել հոգեբանա-մանկավարժական ներգործության այնպիսի մեթոդներ և ձևավորել կրթական ու մշակութային այնպիսի միջավայր, որոնք հնարավորություն կտան ԶՈՒ-ի համար սահմանված պահանջներին համարժեք նրանց շրջանում արմատավորելու ու զարգացնելու հոգևոր-բարոյական և սոցիալական արժեքներ, զինվորական մասնագիտությունների համար անհրաժեշտ նշանակալից հատկություններ: Ինչպես տեսնում ենք, նախազորակոչիկների դաստիարակությունը չի կարող սահմանափակվել միայն դպրոցում կիրառվող հոգեբանա-մանկավարժական մեթոդներով, այն ավելի ընդգրկուն

* Հոդվածն ստացվել է 16.06.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 28.08.2025:

գործընթաց է՝ փոխազդող գործոններով: Հոդվածում ներկայացվում են այն գործոնները, որոնք էական ազդեցություն են ունենում այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման վրա:

Նախազորակոչիկների հոգեբանական բնութագրերը

Ինչպես հայտնի է, նախազորակոչիկներ են համարվում 16-ից մինչև 18 տարեկան արական սեռի անձինք, որոնց տարիքը հոգեբանության մեջ համապատասխանում է պատանեկության շրջանին: Նախազորակոչային տարիքը համարվում է անձնավորության զարգացման հույժ կարևոր փուլերից մեկը, որը բնութագրվում է ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և մտավոր կարողությունների ինտենսիվ փոփոխություններով: Եթե ծնողներին ու մանկավարժներին հաջողվում է նախորդող և այս տարիքային փուլերում ձևավորել ու զարգացնել այնպիսի անձնային հատկություններ, ինպիսիք են, օրինակ, ազնվությունը, հայրենասիրությունը, կարգասիրությունը, կազմակերպվածությունը, արդարամտությունը, նախաձեռնողականությունը, ինչպես նաև հաղորդակցական ու կազմակերպչական ունակությունները, իրենց ֆիզիկական ուժն ու տոկունությունը զարգացնելու կարողությունը, հուզական կայունությունը, ապա դա նպաստելու է բանակային միջավայրին տվյալ անձնավորության արդյունավետ հարմարմանը, մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերմանը և դրանց հաջող կիրառմանը: Ինչպե՞ս կարելի է հասնել դրան: Այդ հարցին պատասխանելու համար, նախ, անհրաժեշտ է հաշվի առնել տարիքային առանձնահատկություններով պայմանավորված անձնավորության հոգեբանական բնութագրերը, դրանց վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները:

Առկա են անձնավորության զարգացման, վարքի ուղղվածության, անձնային հատկությունների բնութագրերի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք կարող են հիմք լինել նախազորակոչիկների հոգեբանական բնութագրերի և դրանց դրսևորման սոցիալ-հոգեբանական պատճառների պարզման համար: Այդպիսիք են՝ հոգեվերլուծության (Ֆրոյդ), անհատական հոգեբանության (Ադլեր), հոգեսոցիալական զարգացման (Էրիքսոն), սոցիալական ուսուցման (Բանդուրա), շարժառիթավորման (Մասլոու, Ալդերֆեր, Լեոնտև), տարիքային ճգնաժամների (Վիգովսկի, Էրիքսոն), հարմարման (Պիաժերի) տեսությունները: Անշուշտ, դրանց դիտարկումը մեր հիմնական նպատակը չէ, սակայն փորձել ենք դրանց հաշվառմամբ ներկայացնել նախազորակոչիկների տարիքին բնորոշ այն հոգեբանական բնութագրերը և անձնային հատկությունները, որոնք էական ազդեցություն են գործում զինվորական ծառայությանը նրանց նախնական պատրաստության վրա: Մասնավորապես.

1. այս տարիքային փուլը համարվում է ճգնաժամային և անցումային (դեռահասության և պատանեկության միջև)[1]: Դա անձնավորության

[1] Տես, օրինակ, *Սամվել Խուդոյան,* Անձի զարգացման ճգնաժամային տարիքները: Ե., 2004, էջ 73- 135:

կենսաբանական, հոգեկան, սոցիալական կարողությունների զարգացման կարևոր փուլ է, երբ զարգանում են ուղեղը և այլ օրգաններ, ճանաչողական, հուզականային ոլորտները: Տվյալ փուլը կարևոր է այն առումով, որ ուսուցման ու դաստիարակության այլ ձևերի և հաղորդակցումների ժամանակ մանկավարժները, հոգեբանները, ծնողները պետք է կարողանան ճշգրիտ հոգեբանա-մանկավարժական մոտեցմամբ օգնել, որ նրանք կարողանան հաղթահարել օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները: Հաջողությունները բերելու են ինքնավստահություն, որը կարևոր է հետագա զարգացման, սոցիալական հմտությունների ու գիտելիքների ձեռքբերման համար:

2. Պատանուն բնորոշ է իրեն ուսումնասիրելը՝ պարզելը իր ուժեղ և թույլ կողմերը: Ինքնիրեն ճանաչելու ձգտմամբ նա փորձում է հասկանալ, թե ով է ինքը և ինչ է ուզում դառնալ, փորձում է տարբեր դերեր, հետաքրքրություններ, արժեքներ, նախասիրություններ: Մարդու ինքնաճանաչումը, լինելով բարդ, բազմաստիճան զարգացման գործընթաց, նշանակում է մարդու կողմից իր առանձնահատկությունները, հնարավորությունները, ունակությունները գնահատելու կարողություն, դրա համար չափանիշների ու նորմերի որոշում, հանրույթի, ինչպես նաև ինքն իրեն ներկայացրած պահանջներին համապատասխանող արժեքների ընտրություն: Ինքնաճանաչումն ուղեկցվում է ինքնագիտակցության մակարդակի աճմամբ, ինչը էական նշանակություն ունի գիտելիքների ձեռքբերման և հմտությունների զարգացման համար: Այն իրական հնարավորություններ է ստեղծում սոցիալական միջավայրում ինքնահաստատվելու համար, ինչը զինվորական ծառայությանը նախազորակոչային տարիքի անձանց պատրաստության կարևոր ցուցիչներից է: Ուստի, պատանիների ինքնաճանաչման ակտիվ ձգտումը այն նախադրյալն է, որը պետք է հաշվի առնել նրանց ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելիս:

3. Միջանձնային հարաբերություններում գերակշռում է հուզականությունը: Նրանց բնորոշ են դյուրազգացությունը և տպավորություններով տարվելը, հաճախակի են հույզերի, տրամադրությունների կտրուկ փոփոխությունները, շատ կարճ ժամանակամիջոցում ուրախությունից տխրության կամ զայրույթի անցումները: Նրանք շատ զգայուն են իրենց ուղղված քննադատությունների, գնահատականների նկատմամբ, առավել ևս եթե դա կատարվում է բոլորի աչքի առաջ: Այս դեպքում խիստ կարևոր է ուսուցման ու դաստիարակության ժամանակ հոգեբանա-մանկավարժական ներգործության վեկտորն ուղղել ոչ թե անձնային հատկանիշներին, ինչը կհարուցի դիմադրություն և հակազդեցություն (անգամ ցուցադրական), այլ արժեհամակարգին[2]:

[2] Տես *Զ. Դ. Ասատրյան*, Զինվորական կոլեկտիվում միջանձնային գժտությունների առաջացման և կարգավորման որոշ հարցեր: «ՀԲ», 2002, հմ. 4:

Հայրենիքի պաշտպանությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը արժեքային համակարգի ձևավորման այն «պարարտ հողն» է, որը հիմնականում դիմադրության չի հանդիպում և ունի համախմբման ներուժ:

4. Պատանիներին բնորոշ է մեծերին նմանվելու ցանկությունը, և այդ ցանկությունը որոշ գործոնների ազդեցությամբ ուժեղանում է այնքան, որ պատանիները երբեմն սկսում են իրենց վաղաժամորեն չափահաս համարել՝ ակնկալելով համապատասխան վերաբերմունք: Շատ դեպքերում նրանց չի հաջողվում հավասար հարաբերություններ ապահովել, ինչը պայմանավորված է փորձի պակասով և ոչ բավարար սոցիալական պատրաստվածությամբ: Եվ ինքնահաստատման ձգտումը ուղեկցվում է կենսափորձի, ինքնադրսևորման ձևերի, մեթոդների ու միջոցների աղքատ զինանոցի կիրառմամբ: Ըստ այդմ ինքնագնահատականը կարող է լինել անկայուն և մեծապես կախված արտաքին ազդեցություններից՝ երբեմն դառնալով հակասոցիալական, այդ թվում՝ քրեածին վարքի ձևավորման պատճառ[3]: Ընդսմին որքան արագ հաջողվի հայտնաբերել հակասոցիալական կամ քրեածին վարքի հակումներ ունեցողներին, այնքան արդյունավետ կլինի նման վարքի կանխարգելման կամ շտկման հոգեբանա-մանկավարժական համալիր մեթոդների կիրառումը: Նման վարք ունեցող անձինք, զորակոչվելով բանակ, հետագայում հրամանատարական կազմի համար ստեղծում են լուրջ խնդիրներ[4]:

5. Աշխարհի վերացական ընկալումների գերակշռում. ձևավորվում են անձնական բարոյական սկզբունքները, որոնք կարող են տարբերվել հարազատների կամ հասարակության սկզբունքներից: Այդ տարիքում պատանիներին բնորոշ են իդեալիզմը և ռոմանտիկությունը, որոնք կարող են հանգեցնել կա՛մ կյանքից կտրվածության, կա՛մ արկածախնդրության: Պատանիները փորձում են վարքի որևէ մոդելի ընդօրինակմամբ ինքնիրացվել սոցիալական միջավայրում: Այս հանգամանքի հաշվառմամբ անհրաժեշտ է մեծացնել սոցիալական միջավայրում տարբեր տեղեկատվական միջոցներով հերոսների, պետական, հասարակական և մշակութային գործիչների կերպարների քարոզումը, ինչի շնորհիվ նրանք կդառնան ընդօրինակման տիպար:

Այս առանձնահատկությունների դրսևորումը պայմանավորված է նախազորակոչիկների պահանջմունքներով, հոգեկանի զարգացման մակարդակով, ձևավորված հատկանիշներով, որպես գերակա ընդունված վարքային

[3] Տես *Զ. Դ. Ասատրյան,* Նախազորակոչային տարիքի անձանց հանցավորության որոշ հոգեբանական առումներ: «ՀԲ», 2006, հմ. 1:

[4] Տես «Военная психология: методология, теория, практика», § 2.20. «Профилактика неуставных взаимоотношений в воинских коллективах». М., 2010, с. 211 (http://library.shsu.am/wp-content/uploads/2019/02/korchemniy.pdf):

մոդելներով, սոցիալ-մշակութային միջավայրով, ընտանեկան վիճակով, ոչ բավարար սոցիալական հմտություններով և այլ հանգամանքներով: Պետք է նաև նշել այն փաստը, որ բնականաբար ոչ բոլոր պատանիներն են զարգանում նույն տեմպերով: Ոմանք կարող են ավելի վաղ հասունանալ ֆիզիկապես կամ հոգեպես, իսկ մյուսները՝ ավելի ուշ: Անշուշտ հատկանիշների դրսևորման ըմբռնումը կարևոր է ծնողների, մանկավարժների և հոգեբանների համար (պատանիներին աջակցելու և նրանց արդյունավետ հաղորդակցման հմտություններ, գիտելիքներ փոխանցելու առումով): Զինվորական ծառայությանը նախազորակոչային տարիքի անձանց պատրաստման գործում այս միտումների անտեսումը կարող է հանգեցնել դաստիարակչական աշխատանքի արդյունավետության մակարդակի անկմանը և պատճառ դառնալ կարգազանց վարքի ձևավորման ու զինվորական ծառայությանը նրանց անարդյունավետ հարմարման առումով[5]:

Հանրակրթության ոլորտում նախազորակոչիկների պատրաստման գործոնները

Հանրակրթությունը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը: Զինվորական ծառայությանը նախազորակոչիկներին նախապատրաստելը համարվում է հանրակրթության նպատակների իրագործման փուլերից մեկը: ՀՀ օրենքով սահմանված են հանրակրթության հիմնական խնդիրները, որոնցից են համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատի և քաղաքացու ձևավորելը, ինչպես նաև սովորողների հայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստման համալիր ծրագրի կենսագործումը[6]:

Դպրոցում ստացած գիտելիքների, հասարակության մեջ ձևավորված բարոյական նորմերի ու արժեհամակարգի, ինչպես նաև ֆիզիկական ու հայրենասիրական դաստիարակության շնորհիվ նախազորակոչիկները ձեռք են բերում այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են ապագա զինվորներին հայրենիքի պաշտպանության գործին մեծ գիտակցական ակտիվությամբ մասնակցելու համար:

Զինվորական ծառայությանը նախազորակոչիկների պատրաստման վրա ազդող գործոններից են.

---

[5] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Վ. Բ. Յարամիշյան*, Պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների հարմարման հարցի շուրջ: «ՀԲ», 2013, հմ. 3 - 4:

[6] Տես ՀՀ 2009 թ. հուլիսի 10-ի «Հանրակրթության մասին» հմ. ՀՕ-160-Ն օրենք (https://www.arlis.am/hy/acts/53007):

1. Բանակի նկատմամբ բնակչության վստահության բարձր մակարդակը: Զինվորական ծառայությանը նախազորակոչիկների պատրաստման արդյունավետությունն անհամեմատ մեծ է, երբ բնակչությունը վստահում է բանակին և համախմբված է երկրի պաշտպանության գաղափարի շուրջ: Բանակի նկատմամբ բնակչության լիարժեք վստահությունն ու աջակցությունը փոխադարձ պատասխանատվության մի յուրահատուկ խթան են նախազորակոչիկների շրջանում բանակում ծառայելու պատրաստակամության ձևավորման համար: Նշենք, որ այս տեսակետից բացասական ազդեցություն գործեցին բանակի թեմաներով գրող մի քանի լրագրողների ոչ պրոֆեսիոնալ մեկնաբանությունները, ինչպես նաև բնակչության որոշ շրջաններում համացանցում եղած տեղեկույթից գրագետ կերպով օգտվելու ցածր մակարդակը:

2. Հանրակրթության վերաբերյալ հասարակության վերաբերմունքը: Հարկ է նշել, որ որոշ շրջաններում ձևավորվել են սխալ կարծրատիպային պատկերացումներ: Օրինակ՝ կարելի է չսովորել, բայց գերազանց գնահատականներ ստանալ ու մեծ բարձունքներ նվաճել, հենվել «հաջողակ հայրիկի», կամ «բարերարի ու ծանոթների» նյութական հնարավորությունների ու միջանձնային կապերի վրա: Դա այն դեպքում, երբ հնագույն ժամանակներից ի վեր հայ ժողովուրդը առանձնահատուկ կարևորություն է տվել կրթությանը: Այդ են վկայում անգամ օտարերկրյա գիտնականները: Օրինակ՝ անգլիացի պատմաբան, կովկասագետ (հայագետ, վրացագետ) Դևիդ Լենգը նշում է, որ քրիստոնեական Հայաստանը կրթության նկատմամբ սիրո ավանդույթների ժառանգորդ է: Հայ գրերի ու կրթության ակունքները ավելի խորն են թաղված դարերի մթում, քան սովորաբար ենթադրում են[7]:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է ուսումնասիրել հասարակության որոշ շրջաններում կրթության նկատմամբ սխալ դիրքորոշումների ձևավորման սոցիալ-հոգեբանական պատճառները և ձեռնարկել դրանց վերացման ու կանխարգելման արդյունավետ միջոցներ: Դրան կարելի է հասնել միայն պետություն - ընտանիք - դպրոց - հասարակություն սերտ ու մտածված համագործակցության միջոցով:

3. Հայրենասիրական դաստիարակության կազմակերպման վիճակը: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է վերանայել հանրակրթական դպրոցում աշակերտների հայրենասիրական դաստիարակության ուսումնամեթոդական աշխատանքի կազմակերպման սկզբունքները և ձևաչափը, լիարժեք կերպով օգտագործել առկա ռեսուրսները, և այս ամենը համապատասխանեցնել պետության, այդ թվում՝ զինված ուժերի, և հասարակության ձևավորված պահանջմունքներին ու պահանջներին:

[7] Տես *Дэвид Лэнг.* Армяне. Народ-созидатель. Пер. с англ. Е. Ф. Левиной. М., 2004, с. 309 (https://commons.hayazg.info/images/e/e8/Лэнг_Д._Армяне_-_народ-созидатель.pdf):

Հանրակրթական դպրոցում նախազորակոչային տարիքի անձանց համակողմանի զարգացումը ապահովում է նրանց մեջ ոչ միայն կրթական չափանիշներով սահմանված առնվազն նվազագույն մակարդակի գիտելիքների, կարողությունների և հմտությունների, հայրենասիրական նկրտումների, Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելու գիտակցության, համոզմունքների, դրական դիրքորոշումների, աշխարհայացքի, համապատասխան բարոյահոգեբանական հատկությունների, այլև զինվորական ծառայության համար անհրաժեշտ գործնական հմտությունների ու ֆիզիկական կարողությունների, զինվորական ծառայության պայմաններին արագ կերպով հարմարվելու համար հոգեբանական նախադրյալների, ինչպես նաև զինվորական ծառայության առանձնահատկությունների վերաբերյալ նախնական գիտելիքների ձևավորում:

ՀՀ քաղաքացի և հայրենասեր լինելու անհրաժեշտ արժեհամակարգի և հայացքների, կողմնորոշումների, դիրքորոշումների, գործունեության ու վարքի շարժառիթների, ինչպես նաև անձնային հատկությունների ձևավորմամբ է միայն հնարավոր ապագա զինծառայողին մեծ արդյունավետությամբ նախապատրաստել Հայրենիքի պաշտպանի գործառույթների լիարժեք կատարմանը:

4. Դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի դասավանդման բարձր մակարդակի ապահովումը: Անշուշտ, առարկայի արդյունավետ դասավանդման առաջին նախապայմաններից մեկը այդ առարկան դասավանդող ուսուցիչների մասնագիտական ու հոգեբանամանկավարժական պատրաստականության բարձր մակարդակի ապահովումն է: Ինչպես հայտնի է, այդ առարկան հիմնականում դասավանդում են ՀՀ Զինված ուժերից և այլ ուժային կառույցներից զորացրված սպաներ: Սակայն միայն ռազմական ոլորտի վերաբերյալ նրանց գիտելիքները չեն կարող բավարար համարվել պատանիներին անհրաժեշտ գիտելիքներ փոխանցելու համար, հարկ է կարողանալ ձևավորել այդ առարկայի նկատմամբ կայուն հետաքրքրություն և շարժառիթներ, իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ դասավանդողը լավ է տիրապետում հոգեբանա-մանկավարժական ներգործության մեթոդներին[8]:

Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքին, թե ՀՀ դպրոցների 8–12-րդ դասարաններում ՆԶՊ առարկային տարեկան հատկացված 34 ժամից որքանն է տրամադրվում գործնական պարապմունքներին, ինչպիսի տեխնիկական հագեցածությամբ են կազմակերպվում դասերը: Այդ ամենը ունի էական նշանակություն դրանց արդյունավետության համար: Կարծում ենք, որ նպատակահարմար է ավելացնել գործնական պարապմունքների

[8] Տես, օրինակ, *Р. В. Пантин.* Совершенствование профессиональной компетентности будущих преподавателей начальной допризывной подготовки. Ташкент, 2024, сс. 32- 63:

ժամերը: Առավել ևս դրա համար բանակի անմիջական նախաձեռնությամբ ստեղծված են դրական նախադրյալներ: Օրինակ՝ հայտնի է, որ սեպտեմբերի 1-ին՝ գիտելիքի և դպրության օրվա առթիվ, ինչպես նաև «Վերջին զանգի» կապակցությամբ ՀՀ ՊՆ ստորաբաժանումների ներկայացուցիչները ակտիվ կերպով մասնակցում են դպրոցներում կազմակերպվող հանդիսավոր միջոցառումներին, հանդես գալիս շնորհավորական ելույթներով: Ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են ՀՀ ՊՆ սպայական կազմի ներկայացուցիչների հանդիպումներ ավագ դպրոցում սովորող աշակերտների հետ: Աշակերտներին փոխանցվում է տեղեկույթ ռազմական բուհերում դասավանդվող զինվորական մասնագիտությունների և ապագա կուրսանտների ու սպաների սոցիալական, բժշկական ապահովության փաթեթների վերաբերյալ: Պետք է առավել հաճախակի դարձնել աշակերտների մասնակցությունը զորամասերում կազմակերպվող միջոցառումներին, կամ ՆԶՊ առարկայի որոշ գործնական պարապմունքներ անցկացնել զորամասերում: Աշակերտները կարող են դիտել զինծառայողների որոշ ուսումնական պարապմունքներ (օրինակ՝ շարային): Նման միջոցառումները հոգեբանա-մանկավարժական ներգործության առումով նախազորակոչիկների վրա կունենան զգալի դրական ազդեցություն:

Այսպիսով՝ ժամանակակից հայ հոգեբանության և մանկավարժության կարևոր խնդիրներից է սովորողների մեջ պետութենամետ մտածողության ձևավորումը: Կարծում ենք՝ անհրաժեշտ է կրթությունը կազմակերպել պատմության, գրականության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Այս առումով կարևոր պետք է համարել աճող սերունդների մեջ Հայրենիքի պաշտպանությանը, հայրենի պետության շահերին անխոնջ կերպով ծառայելու կայուն շարժառիթների ձևավորումը, այն անհրաժեշտ գիտելիքների փոխանցումը, ինչը հնարավորություն կտա նրանց մասնակից լինելու պետական և հասարակական նշանակալից գործընթացներին:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ПОДГОТОВКИ ДОПРИЗЫВНИКОВ К ВОЕННОЙ СЛУЖБЕ

З. Д. АСАТРЯН, полковник запаса, кандидат психологических наук, доцент, начальник Отдела военно-научного редактирования Научно-издательского центра НИУО МО РА; В. Г. ГЮЛАЗЯН, кандидат педагогических наук, старший ученый-аналитик Группы организации науки и обеспечения качества образования ВА им. Вазгена Саргсяна МО РА

РЕЗЮМЕ

Обеспечение боеспособности армии в значительной степени обусловлено тем, как государство организует воспитание и образование своих будущих военнослужащих, в частности, с какой эффективностью функционирует система начальной военной подготовки.

Для обеспечения быстрой адаптации призывников к военной службе важно пересмотреть содержание работы с юношами допризывного возраста как с учетом психологических характеристик, обусловленных их возрастными особенностями, так и взаимовлияющих на этот процесс других факторов.

В соответствии с этим одной из важных задач современной армянской психологии и педагогики является формирование у учащихся государствоцентричного мышления. В связи с этим необходимо формирование у подрастающих поколений устойчивых мотивов беззаветного служения делу защиты Отечества и интересам родного государства, а также необходимых знаний, которые позволят им стать быть участниками значимых государственных и общественных процессов.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

PSYCHOLOGICAL AND PEDAGOGICAL FACTORS IN PREPARING THE PRE-DRAFTEES FOR MILITARY SERVICE

Z. D. ASATRYAN, Colonel (Res.), PhD in Psychology, Associate Professor, Head, Defense-Academic Editing Department, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA;
V. G. GYULAZYAN, PhD in Pedagogy, Senior Researcher, Group, Science Organization and Education Quality Assurance, Vazgen Sargsyan Military Academy, MOD, RA

SUMMARY

Ensuring the combat readiness of the army is primarily determined by the way the state organizes the upbringing and education of its future servicemen, in particular, how effectively the system of initial military training functions.

To provide for the conscripts' rapid adaptation to military service, it is important to review the content of work with the youth of pre-conscription age, taking into account both the psychological features determined by their age characteristics, and some other factors mutually affecting this process.

Consistent with this, one of the important tasks of modern Armenian psychology and pedagogy is to shape state-centric thinking in students. In that respect, it is necessary to form in the younger generations sound stimuli for selfless service to the cause of protecting the Motherland, and the interests of their native state, as well as the necessary knowledge that will enable them to take part in notable state and public processes.